

ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՔԻՆԵՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 բուրի: Կէս տարվանը 6 բուր: Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Նմանադրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Ճայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով:

Ճայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ: Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Օգնութեան պահանջը Վերջին տեղեկութիւններ. — ՆԵՐՔԻՆԵՐԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի թղթակցի կարծիքները, Երևանի դէպքերը մայիսի 23-ից մինչև 25-ը. Տեղեկութիւններ գաւառից. Նա-մակ Իգդերից. Ներքին լուրեր. — ՀԵՐԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՊԱՆԱՋԸ

Օգնութիւն է խնդրում ձեռնից Նա-խիջևանի գաւառի թշուառացած ժողովուրդը: Օգնութիւն է խնդրում Նախ-լուխար գիւղում հաւաքված գիւղական ազգաբնակիչները:

Մարտափի, մահվան մշտական սպառ-նալիքի տակ օրեր անցկացնող մեր դժ-բաղդ եղբայրները գոնէ ցամաք հաց կարողանանք տալ, որ նրանք վերջին յուսահատութեան ճանկը չընկնեն և բա-րոյական մի փոքր արիւնքիւն պահպա-նեն դիմանալու այն դժոխային փորձանք-ներին, որ նրանց վիճակվել է այժմ:

Մենք լաւ գիտենք, որ մեր հասարա-կութիւնը նորերս բաժին հանեց Բագուի աղէտից փնտրվածների օգտին, մենք գի-տենք, որ հասարակութիւնը ամեն օր, ամեն մի քայլափոխում բազմաթիւ կա-րիքներ է հոգում և կարօտեալներին խնա-մում, բայց և այնպէս մի վայրկեան ան-գամ կանգ չը պէտք է առն չը նորանոր նուիրատուութիւնների առջև, որովհետև գիւղական ազգաբնակիչներն իր հողի վրա հաստատ մնալը և այնտեղից չը շարժվելը էական և հիմնական գործերից մէկն է, որին մենք պէտք է ամեն կերպ նպաստենք: Մեր ժողովուրդը չը պէտք է թողնէ գիւղը և իր տնտեսութիւնը, չը պէտք է փախչէ քաղաք, պատենականու-թեան մասնելով իր տուն ու տեղը, հոգն ու տնտեսութիւնը և նրանց հետ կապ-ված իր ապագայ զարգացման յոյսերը:

Այն մարդիկ, որոնք փնտրվել և դժբաղ-դացել են, մեղաւոր տեսնել և յանցաւոր-ներ չեն, այլ անմիջ գոհեր, չար մարդիկ տապալած դժբաղդ են: Մենք մեղա-պարտներին էլ խղճում ենք և նրանց օգնութիւն հասցնում: Իսկ երբ մեր ա-ռաջ կանգնած են անմիջ գոհերի շարքեր, ճգնաժամի հարուածներին ենթարկված ժողովրդական մասսաներ, մենք պէտք է թաքնվենք մեր բոլոր ոյժերը կարելիին չափ թերթեալներու նրանց տանջանքները և զրկանքները:

Կարիքները շատ են, բայց նրանց տուէք գոնէ ցամաք հաց:

Ցամաք հաց:

Որքան թշուառ է մարդկանց դրու-թիւնը, երբ խնդրում են գոնէ ապահո-վել նրանց ցամաք հացը:

Մենք պէտք է տանք այդ ցամաք հացը մեր եղբայրներին:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախիջևանի գաւառի և Շարուրի փնա-ված հայ գիւղացիներ ին մեծապէս կարող էր օգնել մի բան, այդ այն է, եթէ նրանք գոնէ այստեղից աշխատեալով վրէժնէին, որ ազատ դըրս գային իրանց հողերը և կարողանային հաւաքել տար-վայ բերքը:

Առաջիկայ ձմեռը և ամբողջ տարին նրանք պէտք է ապրեն այդ բերքով: Սակայն հայ գիւղացիները զեռն չեն կա-րողանում դաշտ գուրս գալ: Մեր ստա-ցած հեռագիրները տեղեկացնում են, որ գիւղացիները մեծ մասը չէ վստահանում նոյն իսկ վերադառնալ գիւղերը:

Գաւառական վարչութիւնը և այնտեղ եղած զօրք պէտք է բոլոր իրանց ջան-

քերը գործ դնեն ապահովել գիւղացիների ազատ երթևեկութիւնը: Այսպէս մի եր-կու ամսից յետոյ մեր առաջ կանգնած կը լինի կարօտ ժողովուրդի մի ստուար բազմութիւն, որին կերակրելը մեծ դը-ժուարութիւններ կը յարուցանէ թէ մեր հասարակութեան և թէ կառավարութեան համար:

Կրիտիկական բալէներ են հասել ա-ղէտի բեմում: Տարվայ ապրուստը փչա-նում է անջուր փնտրած արտերում, խնա-մող ձեռքերի բացակայութեան պատճա-ռով:

Ամեն մի յապաղում, ամեն մի կորցրած օր ծնելու է բարդութիւններ ազգաբնա-կութեան տնտեսական կեանքում և յե-տոյ ամենաանուշադուն և մեծ ջանքերն էլ անգոր կը լինեն հասցնել այն մեծ օգնութիւնը, որ կը տար գիւղացուն իր սեփական վարուցանքս:

Ապագաութեան ենթարկված ժողո-վուրդը շատ բան է կորցրել և կարօտ է բազմապատկ օգնութեան, բայց եթէ նա կարող լինէր իր արտերի հասոյթների մեծագոյն մասը իր ձեռքը գցել, նա բա-ւական զգալի կերպով մեղմացրած կը լինէր կարիքը և թեթեւացած հասարա-կական օժանդակութեան ծանրութիւնը:

Այդ հերթական և կարևոր պահանջին բաւարարութիւն տալու համար անհրա-ժեշտ է ձեռք առնել անմիջական միջոցներ:

Առաջ ենք բերում Նախիջևանից յունիսի 10-ին ուղարկված հեռագիր հեռագիրը:

Վերջին հեռագրից յետոյ գրութիւնը քանի գնում է վատանում է: Իշխանու-թիւնների գործողութիւնների եղանակը մնում է մի և նոյնը: Իրազեցիները չեն վե-րադառնում տուն: Գարին հասնում է չը կան հնձողներ: Սկսվել է նոյն իսկ գիւղացի-ների մասսային գաղթում: Չնչին գնով ծախում են տաւարը: Գէուսուրի վրա կատարված երկրորդ յարձակումը երէկ յետ մղեցին Գերուսից եկած կոզակ-ները: Մեր Գէուսուր ուղարկված չորս ֆուրգոնը, որոնք բեռնված են ալիւրով սովեթականի համար, ենթարկվեցին թուր-քերի յարձակման: Ինն ձի վերցված է: Կառավարները ազատվել են երեք ձիով, թողնելով ֆուրգոնը կէս ճանապարհին: Մայիսի 18-ին ժողովուրդից թողված նոյն գիւղը ենթարկվեց կրակի և այժմ այր-վում է:

Մետաղ վարդապետ

ՆԵՐՔԻՆԵՐԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԹՂԹԱՅԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Պ. Օրեստ Սեմին, որ, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, թղթակցի պաշտօնով գնացել էր Նախիջևանի գաւառը՝ երկրի դրու-թիւնը տեղի ու տեղը ուսումնասիրելու հա-մար, վերադառնալով Թիֆլիս, մի մասնաւոր ժողովում կարգաց մի շատ հետաքրքրական գեղեցկում իր տեսածները մասին: Չը բաւա-կանանալով այդքանով, պ. Սեմին յունիսի 8-ին ներկայացաւ կովկասեան Փոխարքային: Ահա ինչ ենք կարդում այդ մասին «НОВ. ОБОЗРЕНИЕ» լրագրի մէջ.

«Փոխարքան յանձնարարեց իր օգնական Ն. Ա. Սուլթան Կրիմ-Գիրէյին ցուցմունքներ ստանալ պ. Սեմինից, որ և կատարվեց նոյն օրը:

«Նկատելով Երևանի նահանգի չորս գաւառ-ների ազգաբնակչութեան անախթար դրու-թիւնը ներկայումս, պ. Սեմին համառօտ կեր-պով ընդոռնեց այն ընդհանուր և մասնաւոր պատճառները, որոնցից Երևանեան նահան-գում ծագեց թուրք-հայկական կոտորած: Ընդ-հանուր պատճառները մէջ ցոյց տրվեց այն, որ թուրք և հայ ամբողջ, իբրև գիւղացի, ան-բաւական է իր տնտեսապէս անապահով և ի-

րաւառանական տեսակէտից իրաւազուրկ դը-րութիւնից և այն յատուկ անաշուղ պայման-ներէն, որոնց մէջ դրված են Երևանի թուր-քերը իբրև մահմեդականներ և հայերը՝ իբրև անդամներ մի ազգի, որ ուրիշներէն շատ է տանջվում վարչական սահմանափակող կար-գադրութիւններէն: Այն անբաւականութիւնը, որ հայերն ունեն իրանց դրութիւնից, պ. Սե-մինի ասելով, ձուլվել է կուլտուրական-ազա-տաբար շարժման մէջ, մինչդեռ թուրքերի անբաւականութիւնը արհեստական կերպով ուղղված է ոչ թէ ընդհանուր անբարեկամող պայմանների դէմ, այլ հայերի դէմ, որոնք իբր թէ թուրքերի ճնշված դրութեան պատ-ճառներն են: Թուրքերի աստիճանաբար բռնկ-վող թշնամութիւնը հայերի դէմ ներկայ տար-վալ մէջ արտայայտվեց մի շարք անհաստեան սպանութիւններով, որոնք յետոյ ընդունեցին խմբական կոտորածների ընտելութիւն և բարկացին շնորհիւ այն հանգամանքի, որ թուրքերը խմբային յարձակումներ գործեցին հայերի վրա, թալանեցին և այս բանը հա-մանման գործողութիւններ առաջացրեց նաև հայերի կողմից, թէ ինքնապաշտպանութեան և թէ վրէժխնդրութեան համար: Հայերի և թուրքերի մասնակի ընդհանուր զարգա-ցան և ընդունեցին լայն չափեր այն պատճա-ռով, որ յարձակվողները միշտ անպատիժ էին մնում:

«Այսպէս էր Բագուում, այսպէս եղաւ և Ե-րևանի մէջ ու Երևանի նահանգի չորս գա-ւառներում: Թուրք կողմնորոշները և սպանող-ները իրանց յանցաւոր գործողութիւնները արդարացնում էին նրանով, որ հայերը «ա-պստամբներ» են, իբրև թէ իրանց համար թալանոր են ուղղում: Բայց Երևանեան նա-հանգի գաւառներում հակահայկական շարժու-մը թուրքերի մէջ արգել բարդացաւ նոր տար-րերով, որոնք տալիս են այդ շարժման հա-կաբերականութեան և հակապետական ընտել-ութիւն (եկեղեցիներ քանդել, բռնի իւրաւա-ցում, յարձակումներ պաշտօնականների և զոր-քերի վրա, այն էլ արտասահմանեան մուսուլ-մանները աջակցութեամբ, ինչպէս տեղի ու-նեցաւ Նախիջևանի գիւղի մօտ): Իբրև հե-տևանք այդ շարժման՝ Երևանեան նահանգի չորս գաւառներում աշխատաւոր գիւղական ազգաբնակչութիւնը մասամբ արդէն բարո-ւանդ է եղել, իսկ մեծամասնութեան սպառ-նում է կատարեալ տնտեսական քայքայում և սով, ոչ այնքան փոխադարձ կոտորածներից և թալանից, որքան այն պատճառով, որ աղմե-նիստորացիայի ներկայ գործադրած միջոցները հնարաւորութիւն չեն տալիս շարունակել դաշ-տային աշխատանքները: Ներկայ տարվայ հունիսը Նախիջևանի, Շարուր-Իսաբաղեան, Երևանի և Էջմիածնի գաւառներում մեծ մա-սամբ (հայ և թուրք գիւղերում) պիտի փչա-նայ, եթէ անյապաղ կարգին միջոցներ չեն գործադրվի, որպէս զի գիւղացիները հնարա-ւորութիւն ունենան շարունակելու դաշտային աշխատանքները, երկրի չը կրելով իրանց կեանքի համար: Միւս կողմից կայ այն հան-գամանքը, որ հակահայկական շարժումը բար-դացել է հակաբնակչական և հակապետա-կան գծերով, դա կարող է հետզհետեւ զարգանա-լով, գաւառականից դառնալ ընդհանուր կով-կասեան և միջազգային բարդութիւններ ա-ռաջացնել, որոնք կը սպառնան առաւաց պե-տական սահմանների ճամբողջութեանը: Այս հանգամանքը պիտի աւելի ևս հարկադրէ աղ-միրիստացիային անյապաղ ձեռք առնել ա-մենաանուշադուն միջոցները խաղաղութիւն և կարգ վերահաստատելու խռովութիւնների բեմ դարձած գաւառներում: Իբրև այդպիսի մի-ջոցներ՝ պ. Սեմին յանձնարարում է հեռագիրը:

«1) Որովհետև փնտրված կողմը և զօրքերը անբաւականութիւն են յայտնում, որ խո-սվածութեան այն տեղերում, ուր խառն է ազ-գաբնակչութիւնը, վարչական պաշտօններ տը-րվում են իրար թշնամի ազգութիւններից մէկի ներկայացուցիչներին, ցանկալի էր նշանակել այդպիսի տեղեր գաւառապետներ և պրի-

տաների պաշտօններով չէզոք մի ազգութեան ներկայացուցիչներ—առաւ կամ մի ուրիշ ազգ: Միայն ազգայնական տեսակէտից չէզոք մարդկանց երկու թշնամի կողմերը կարող են միապէս հաւատալ կամ չը հաւատալ: 2) Հրա-տարակել յայտարարութիւններ բոլոր լիզու-ներով, Փոխարքայի կամ տեղական հասարա-կութեան լաւագոյն ներկայացուցիչների ստո-րագրութեամբ, թէ թուրքերին մոլորեցրել են նրանք, որոնք հաւատացնում են թէ իբրև հայերը իրանց համար թալանոր են ուղղում, թէ առաւաց Ծարը կողմնորոշների և սպանող-ների օգնութեան կարօտ չէ և թէ այսուհետև ամեն մի սպանութեան և թալանի համար, որ կը կատարեն հայերը կամ թուրքերը, մեղա-ւորները կենթարկվեն խիստ պատժի, իսկ նրանց կայքը կը գրաւվի և կը արվի ֆնա-սվածի ընտանիքին: 3) Հիմնել հրապարակային դատաստանական-ընկական յանձնաժողովներ երկու թշնամի ազգերի ներկայացուցիչներից և դատաստանական, վարչական ու զինուորա-կան իշխանութիւնների ներկայացուցիչներից, տալով նրանց զինուորական դատարանների լիազօրութիւն: 4) Ցերեկով զինուորական պա-հաններ դնել իրար հետ թշնամութիւն անող գիւղերի հողային սահմաններում, որպէս զի գիւղացիները հնարաւորութիւն ունենան շա-րունակել դաշտային աշխատանքները: Այս-պիսի պահանքներ պիտի դնվեն և այն աղբւր-ների մօտ, որոնք ոռոգման ջուր են տալիս: 5) Անյապաղ տալ ֆնաւսված գիւղացիներին անհրաժեշտ բաները անասուններ կամ ի հաշիւ այն գիւղական համայնքների, որոնց անդամ-ները նկատված են եղել գիւղերի վրա յար-ձակվելիս, կամ ի հաշիւ պետութեան: 6) Պատժել այն մուլաններին, որոնք նկատվել են հակաբնակչական ագիտացիայի մէջ և սը-րանք սովորեցրել են մահմեդականներին քան-դել կամ թալանել եկեղեցիներն ու դպրոցնե-րը: 7) Տանել դէպի սահմանները բաւական բանակութեամբ զօրքեր: 8) Մամուլի կատա-րեալ ազատութիւն այն փաստերը հրատա-րակելու մէջ, որոնք վերաբերվում են հայ-թուրքական կոտորածի բոլոր հանգամանք-ներին»:

ԵՐԵՎԱՆԻ ԴԵՊՐԵՐԸ ՄԱՅԻՍԻ 23-ԻՑ ՄԻՆ-ՉԵՐ 25-Ը

(Տեղեկութիւններ, որ հաւաքել եմ ես Օրեստ Սեմինի հետ միասին Երևանի դէպքերի մա-սին առաւ, հայ և թուրք խնտիկագիտիչայի ներ-կայացուցիչներից):

Մինչ այդ հայերը նստած էին ոստիկանա-տան մօտ բուրվարի վրա և զրոյց էին անում: Եւ մէկ էլ յանկարծ հրացանաձգութեան ձայն լսվեց, որ, ինչպէս երևում է, ծառայեց որպէս ազգանշան թուրքերի համար, որոնք սկսեցին հրացան արձակել «Լիօն» հրաւանդի կողմից և մի թէյարանից: Հայերը նոյնպէս պատաս-խանեցին հրացանաձգութեամբ: Հրացանա-ձգութիւնն անմիջապէս տարածվեց ամբողջ քաղաքի մէջ: Փոխարքա՝ հրացանաձգութեան սկզբում շուկայի մէջ տեղի ունեցաւ մի բա-ւական հետաքրքիր միջնադէպ:

Այն միջոցին երբ տեղի էր ունենում թուր-քերի և հայերի միջև փոխադարձ հրացա-նաձգութիւնը, Լևոն Մուշեղեանը տեսնում է հայերի մէջ իր ծանօթ մի թուրք ուսանող Մուրադաբէկովին: Շրջապատողները ռիսկա-լութեամբ էին նայում նրա վրա և նոյն իսկ ուղում էին խնջարներով ու արածանակնե-րով յարձակվել վրան: Երկու կրելով, որ ամբողջ կարող է կտոր-կտոր անել Մուրադա-բէկովին, Մուշեղեանը բռնում է նրան և բա-շում տանում մօտիկ գտնված մի հայի տուն և փակում մի դատարկ սենյակի մէջ: Բայց երբ ինքը կամենում է դուրս գալ, տեսնում է որ վրայ դռները կողպված են, իսկ մուտքի դուռը հրացանաձգութեան էր ենթարկված թէյարանի թուրքերից: Վերջապէս կէս ժա-մից յետոյ դուրս է գալիս այդ տանից (ուսա-նողը մնում է այնտեղ): Պատահելով ոստիկա-

